

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀԱՆ-ԳՀԾՁԲ-04/26

N 2140

ք.Երևան

«27» 03. 2026թ.

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության Գլխավոր տնօրեն Վ.Զիլինգարյանի, որը գործում է «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ կանոնադրության հիման (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԿԱԻՄԱՆ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Կ.Միքայելյանի որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Ավտոմեքենաների տեխնիկական ստուգման» ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 4000000 (չորս միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝
ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxԲ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում

Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջի զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:
Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144

Գլխավոր տնօրեն



Վ.Զիլինգարյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Կաիման» ՍՊԸ
ք. Երևան, Աջափնյակ թաղամաս,
Շիրազի փ. 30 34
ՀՀ 1570023314500100
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀՀՀ 01269447

Տնօրեն



Վ.Սիքալեյան
(ստորագրություն)

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հրավ նախ չափ համար	գնումների պլան նախ միջ ծածկ՝ ըստ ԳՄԱ դաս (CPV)	Ծառայության				մատուցման	
		տեխնիկական բնութագիրը	չափ միավ	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդի քան	հասցեն	Ժամկետ
1	71631120/1	Տրանսպորտային միջոցների քանակը, ըստ բաժինների խմբավորումը, տեխնիկական պարամետրերը, և դրանցում առկա՝ կոմպլեկտացիան ամբողջացնող սարքավորումների մանրակրկիտ նկարագիրը, ամրագրված է կից ներկայացվող Հավելված 1.1-ում: Տրանսպորտային միջոցների վերանորոգման և սպասարկման ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ և(կամ) հնարավոր ծառայությունների, ըստ ավտոմեքենաների մանրամասն ամրագրված է կից ներկայացվող Հավելված 1.1-ում: Մատուցված ծառայությունների համար որպես երաշխիքային ժամկետ տահմանվում է առնվազն 1 (մեկ) տարին՝ ամեն մի մատուցված ծառայության հանձնման-ընդունման արձանագրության երկկողմ ստորագրման պահից սկսած: Վճարման պայմանները. Մատուցված ծառայությունների երաշխիքային ժամկետի ընթացքում ծագած թերությունների շտկումները, կատարվող ծառայությունները և վերանորոգումները իրականացվում են կատարողի հաշվին և միջոցներով փոխադարձ համաձայնությամբ՝ գրավոր: Գնման առարկայի պահանջվող ծավալը նշված է	դրամ	Ոչ ավելի քան 4000000	1	Ծառայություն իրականացնող կազմակերպության համապատասխան տարածքում	526-ն Որոշմա 21-րդ կե 1-ին ենթակե ՀՀ-ում պարբեր յան մին 31.12.20:

		հավելված 1.1- ում յուրաքանչյուր բաժնի համար Վճարումն իրականացվում է պայմանագրով նախատեսված փաստացի մատուցված ծառայությունների՝ աշխատանքների ընդունման վերաբերյալ կազմված հանձնման-ընդունման արձանագրության երկկողմ ստորագրման հիման վրա: Տեխ. սպասարկման կայանի հեռավորությունը պետք է լինի ոչ ավել քան 5 կիլոմետրը <<Հայաէրոնավիգացիա >>ՓԲԸ-ի տարածքից: Հաղթող մասնակիցը ավտոմեքենայի անսարքության դեպքում ինք իր ուժերով կամ պետք է վերացնի թերությունը կամ անսարքությունը տեղում կամ տեղափոխի իրեն պարկանող ավտոտեխասպասարկման կայան իր ուժերով:					
--	--	---	--	--	--	--	--

* Ծառայությունների մատուցման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայությունները մատուցել ավելի կարճ ժամկետում

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
 ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ
 Ի.Գասպարյան 33
 Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
 ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
 ՀՎՀՀ 01216144

Գլխավոր տնօրեն



Վ.Զիլինգարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Կաիման» ՍՊԸ
 ք. Երևան, Աջափնյակ թաղամաս,
 Շիրազի փ. 30 34
 ՀՀ 1570023314500100
 «Ամերիաբանկ» ՓԲԸ
 ՀՎՀՀ 01269447



Տնօրեն

Կ.Միքայելյան

(ստորագրություն)

Կ.Տ.

			Ավտոմեքենաներ 71631120/1								Հավելված 1.1			
	ԱՆՎԱՆՈՒՄԸ													
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	Փոփոխություններ
SU-1 մեքենայի ծառայությունների անվանում														
Հետազոտման ստուգման աշխատանքներ														
1	Բռնկման համակարգի ստուգում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000
2	Կցորդման համակարգի ստուգում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000
3	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000
4	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000
6	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000
7	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000
1. Շարժիչ														
8	Շարժիչի հանում և տեղադրում	հատ	80000	80000	80000	80000	80000	80000	40000	80000	80000	80000	80000	80000
9	Շարժիչի քանդում արատավորում և հավաքում	հատ	150000	150000	150000	150000	0	0	0	150000	150000	150000	150000	150000
10	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի	հատ	40000	40000	40000	40000	0	0	0	40000	40000	40000	40000	40000
11	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով,	հատ	40000	40000	40000	40000	0	0	0	40000	40000	40000	40000	40000

12	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով	հատ	40000	40000	40000	40000	40000	40000	0	0	0	40000	40000	40000	40000
13	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	հատ	5000	5000	5000	5000	5000	5000	0	0	0	5000	5000	5000	5000
14	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	0	0	0	10000	10000	10000	10000
15	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	0	0	0	10000	10000	10000	10000
16	Էլեկտրական Շարժիչի հանում և տեղադրում	հատ	0	0	0	0	0	0	40000	40000	40000	0	0	0	0
17	Էլեկտրական Շարժիչի քանդում արատավորում և հավաքում փոխարինում նոր պահեստամասերով	հատ	0	0	0	0	0	150000	150000	150000	150000	0	0	0	0
18	Էլեկտրական Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինում նոր պահեստամասերով	հատ	0	0	0	0	0	40000	40000	40000	40000	0	0	0	0
19	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով ,	հատ	40000	40000	40000	40000	40000	40000	0	0	0	40000	40000	40000	40000
20	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով փոխարինում նոր պահեստամասերով	հատ	40000	40000	40000	40000	40000	40000	0	0	0	40000	40000	40000	40000
21	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	0	0	0	10000	10000	10000	10000
22	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում փոխարինում նոր պահեստամասերով	հատ	40000	40000	40000	40000	40000	40000	0	0	0	40000	40000	40000	40000
23	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ փոխարինում նոր պահեստամասերով	հատ	40000	40000	40000	40000	40000	40000	0	0	0	40000	40000	40000	40000

[illegible]

35	Համակարգչային ակտորություն, թերությունների վերացմամբ	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000
36	Յուրի ռադիատորի փոխարինում	հատ	50000	50000	500000	0	0	0	0	50000	50000	10000	50000	10000
37	Յուրի ռադիատորի նորոգում	հատ	10000	10000	10000	0	0	0	0	10000	10000	10000	10000	10000
38	Յուրի գտիչի փականի փոխարինում փոխարինում նոր պահեստամասերով	հատ	3000	3000	3000	0	0	0	0	3000	3000	3000	3000	3000
39	Արտաձման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում փոխարինում նոր պահեստամասերով	հատ	20000	20000	20000	0	0	0	0	20000	20000	20000	20000	20000
40	Ներաձման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	20000	20000	20000	0	0	0	0	20000	20000	20000	20000	20000
41	Արտաձման կալեկտորի միջադիրի փոխարինում փոխարինում նոր պահեստամասերով	հատ	10000	10000	10000	0	0	0	0	10000	10000	10000	10000	10000
42	Ներաձման կալեկտորի միջադիրի փոխարինում փոխարինում նոր պահեստամասերով	հատ	10000	10000	10000	0	0	0	0	10000	10000	10000	10000	10000
43	Վառելիքի փողրակի փոխարինում փոխարինում նոր պահեստամասերով	հատ	10000	10000	10000	0	0	0	0	10000	10000	10000	10000	10000
44	Վառոցքի մոմի փոխարինում 1կ-տ փոխարինումով Նոր դետալներով	հատ	10000	10000	10000	0	0	0	0	10000	10000	10000	10000	10000
45	Վառելիքի նուրբ մաքրման գտիչի փոխարինում փոխարինում նոր պահեստամասերով	հատ	10000	10000	10000	0	0	0	0	10000	10000	10000	10000	10000

46	Օրի գտիչի փոխարինում փոխարինում նոր պահեստամասերով	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000
47	Կունդիցիների գտիչի փոխարինում փոխարինում նոր պահեստամասերով	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000
48	Օրի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում փոխարինում նոր պահեստամասերով	հատ	10000	10000	10000	10000	10000	0	0	10000	10000	10000	10000
49	Օրի ծախսաչափիչի փողրակի հանում և տեղադրում	հատ	10000	10000	10000	10000	10000	0	0	10000	10000	10000	10000
50	Օրի գտիչի փողրակի հանում և տեղադրում փոխարինում նոր պահեստամասերով	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000
51	Օդաքաշի փողրակի հանում և տեղադրում փոխարինում նոր պահեստամասերով	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000
52	Ավտոմատ փոխանցման տուկի ղելավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում փոխարինում նոր պահեստամասերով	հատ	50000	50000	50000	50000	50000	50000	50000	50000	50000	50000	50000
53	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում 1 կ-տ փոխարինում նոր պահեստամասերով	հատ	20000	20000	20000	20000	20000	0	0	20000	20000	20000	20000
54	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	հատ	10000	10000	10000	10000	10000	0	0	10000	10000	10000	10000
55	Բոցամուղի կողակիրում	հատ	10000	10000	10000	10000	10000	0	0	10000	10000	10000	10000
56	Ինժեկտորի բոցամուղի խտաբույներ փոխարինում փոխարինում նոր պահեստամասերով	հատ	10000	10000	10000	10000	10000	0	0	10000	10000	10000	10000

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

Ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումար		հատ	7890504	7890504	7890504	15990507	6817508	6817508	6817508	7890511	7892511	7892511
Ընդհանուր ծառայության գումարը		հատ	91 682 587									
												7892511
												7892511

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

«Հայաերոնավագի» ՓԲԸ
ք. Երևան-0042, «Հվարթոն» ՕԿ
Ի. Գասպարյան 33
ՀՀ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Հվարթոն» մ/ճ
ՀՎՀՀ 01216144

Գլխավոր տնօրեն

Վ. Հիլինգարյան



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Կախման» ՍՊԸ
ք. Երևան, Աջախնյակ թաղամաս, Շիրազի փ. 30 34
ՀՀ 1570023314500100
«Ամերիկայան» ՓԲԸ

ՀՀ ՏՀՆ ՕԴ 269447

Ստորին
Վ. Միլինգարյան



ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության

h/h	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71631120/1	Ավտոմեքենաների տեխնիկական ստուգման ծառայություններ			փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	Ոչ ավելի քան 4 000 000

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144

Գլխավոր տնօրեն

Վ.Զիլինգարյան
(ստորագրություն)



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Կախման» ՍՊԸ
ք. Երևան, Աջափնյակ թաղամաս,
Շիրազի փ. 30 34
ՀՀ 1570023314500100
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 01269447

Տնօրեն

Կ.Միքայելյան

(ստորագրություն)

